

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

_____ 2021թ.

N__-Ա

ՈՐՈՇՈՒՄ

**ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ
ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱԶԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով քաղաքացիական օրենսգրքի 685-րդ հոդվածով, Երևան քաղաքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 23-ի հ.315-Ն որոշման հավելվածի 3-րդ կետով.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին՝ Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող Չեխովի փողոցի հ.33 հասցեում գտնվող գույքի նկուղային, առաջին և երկրորդ հարկերից ««ՓՐԿՈՒԹՅՈՒՆ» հաշմանդամ երեխաների և երիտասարդների կենտրոն» բարեգործական հասարակական կազմակերպությանը տրամադրված 900.0քմ մակերեսով /Շենգավիթ Չեխովի փողոց հ.33/1, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 19.06.2013թ. հ.19062013-01-0148 վկայական/ տարածքի անհատույց օգտագործման պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգել 5 (հինգ) տարի ժամկետով:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝**

Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր ՈՒ Մ

«ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱԶԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ
ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ներկայացվող նախագծով նախատեսվում է Չեխովի փողոցի հ.33 հասցեում գտնվող գույքի նկուղային առաջին և երկրորդ հարկերից ««ՓՐԿՈՒԹՅՈՒՆ» հաշմանդամ երեխաների և երիտասարդների կենտրոն» բարեգործական հասարակական կազմակերպությանը տրամադրված 900.0քմ մակերեսով տարածքի /Շենգավիթ Չեխովի փողոց հ.33/1, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 19.06.2013թ. հ.19062013-01-0148 վկայական/ անհատույց օգտագործման պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգել 5 /հինգ/ տարի ժամկետով:

Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի օգոստոսի 10-ի հ.480-Ա որոշման հիման վրա քննարկվող տարածքն անհատույց օգտագործման իրավունքով, մինչև 2018 թվականի ապրիլի 29-ը ժամկետով տրամադրվել է կազմակերպությանը և վերջինիս հետ կնքվել է գույքի անհատույց օգտագործման պայմանագիր, որի հիման վրա իրավունքը ստացել է պետական գրանցում /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.19062013-01-0148 վկայական/:

Կազմակերպությունն աջակցում է հաշմանդամ երեխաների և երիտասարդների, մասնավորապես՝ մտավոր խնդրիներ ունեցողների սոցիալական, կրթական և առողջապահական հիմնախնդիրների լուծմանը: Կենտրոնը, որտեղ հաճախում են շուրջ 400 շահառուներ, Երևանում գործող միակ ցերեկային առօրյայի կենտրոնն է՝ մտավոր արատ ունեցող հաշմանդամ երեխաների և երիտասարդների համար: Կազմակերպությունը շահառուներին տրամադրում է տարբեր տեսակի բուժօժանդակ և հումանիտար օգնություն, ինչպես նաև իրականացնում է շահառուների պրոթեզավորում և սոցիալ-մշակութային տարբեր ծրագրեր:

Ելնելով կազմակերպության կողմից մատուցվող ծառայությունների կարևորությունից և անհրաժեշտությունից, ղեկավարվելով Երևան քաղաքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքը օգտագործման տրամադրելու և օտարման 2021 թվականի ծրագրի վերաբերյալ» հ.315-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ կետով՝ նախապատրաստվել է Երևան քաղաքի ավագանու «Պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգելու մասին» որոշման նախագիծ, համաձայն որի առաջարկվում է քննարկվող տարածքը՝ 2026 թվականի սեպտեմբերի 14-ը ժամկետով տրամադրել «Փրկություն» բարեգործական հասարակական կազմակերպությանը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝

Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

**«ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱԶԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ
ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ
ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Երևան քաղաքի ավագանու «Պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

**«ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱԶԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ
ԵԿԱՍՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Երևան քաղաքի ավագանու «Պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝

Հ. ՍԱՐԳՍՅԱՆ